ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2025 թվականի № 437-Ա

ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Նելլի Մխիթարյանի* 2025 թվականի հոկտեմբերի 30-ի № 105 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Առինջի Կ. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Նելլի Մխիթարյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից տասը աշխատանքային օր՝ 2025 թվականի նոյեմբերի 5-ից 18-ը ներառյալ:

2. ***Նելլի Մխիթարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Առինջի Կ. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի տեղակալ ***Ֆլորա Հայրապետյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա.ՎԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի հոկտեմբերի 31
ք. Հրազդան